


Վարդգես Գասպարիին քաշ տալով հանեցին դատարանի դահլիճից՝ հայիոյանքի համար (Տեսանյութ)

21.07.2015թ.



Քիչ առաջ ՀՀ վարչական դատարանում դատավոր Անի Հարությունյանը Վարդգես Գասպարիին դուրս արեց դատարանի դահլիճից: Եվ քանի որ Վարդգես Գասպարին կամովի չհեռացավ, նա հրահանգեց կարգադրիչներին ուժի դիմել եւ նրան դուրս անել: Կարգադրիչներն էլ Գասպարիի ձեռքերը բռնելով՝ նրան պառկած քաշ տալով հանեցին դատարանի դահլիճից: Պատճառն այն էր, որ իր պաշտպանական ճառում Վարդգես Գասպարին մեջբերում արեց ոստիկանապետ Վլադիմիր Գասպարյանի խոսքերից: Նա ասաց, որ ոստիկանապետն իրեն վերջին սեռական հայիոյանքն է տվել. «Առանձնապես հիշում եմ հետեւյալը», - ասաց Գասպարին եւ հայիոյանքն ամբողջությամբ հնչեցրեց դատարանում՝ ցույց տալու համար, թե ինչ բնույթի հայիոյանք է եղել: Դատավոր Անի Հարությունյանը Գասպարիի արարքը որակեց որպես անհարգալից վերաբերմունք դատարանի նկատմամբ եւ հորդորեց դուրս անել նրան: Գասպարին սկսեց բղավել. «Այն, ինչ դուք արել եք՝ պախարակելի չի՞, ընդամենը դրա հրապարակայնացումն է սահմանված կարգի խախտում»: Ըստ Գասպարիի պաշտպան Տիգրան Եգորյանի, Գասպարին տեղյակ չէր, որ այդ մեջբերման հրապարակումը դատարանում կարող է առաջացնել հետեւանք, ուստի խնդրեց վերանայել որոշումը՝ դատավորը մնաց անդդովելի: Գասպարին հայտարարեց. «Սա ոչ թե դատարան է, սա ոստիկանությանը կից կառույց է: Դուք ձեր դեմքով, ձեր անունն ազգանունով, ձեր ստորագրությամբ եք մաքրում այս ռեժիմի կեղտը: Դուք՝ դատավորները, ստորագույն սրիկա հանցագործներ եք: Դուք՝ դատավորները, պետք է գետինը մտնեք, Մարտի 1-ի հանցագործները մինչեւ հիմա չբացահայտված են մնում, որովհետեւ չեք գնահատում, որ այդ մարդիկ

զրկվել են կյանքի իրավունքից: Դուք ամեն տարի 40-50
զինծառայողների սպանությունը պարտակում եք՝ ընդամենը ձեր
կաշառքի բաժինն ունենալու համար, ձեր բարօրությունն ապահովելու
համար»: Գասպարին մի քանի րոպե պառկած մնաց դատական նիստերի
դահլիճի մոտ: Նրա մոտով շտապ-շտապ հեռացավ դատավոր Անի
Ջարությունյանը՝ լսելով նրա վանկարկումները՝ սրիկա դատավորների
մասին: Հաջորդ դատական նիստը, որի ժամանակ հրապարակվելու է
արդեն դատավորի որոշումը, նշանակվեց օգոստոսի 11-ին՝ 17.00-ին:
Յոնիսիսիմե ՋԵԲԵՋՅԱՆ



Ամբողջական հոդվածը կարող եք կարդալ այս
հասցեով՝ <http://www.aravot.am/2015/07/21/594798/>

© 1998 - 2015 Առավոտ – Լուրերի Հայաստանից